ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

N 1259-Ա « 05 » մարտի 2026թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ Հ 103 ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 151.20ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել ՀՀ վարչական դատարանի 2025 թվականի մայիսի 25-ի ՎԴ/7376/05/21 օրինական ուժի մեջ մտած վճիռը, համաձայն որի՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի փողոցի հ.103 շենքին՝ փողոցի կողմից անմիջապես հարող 151.20քմ մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչվել է Հունան Ռաֆիկի Հարությունյանի ձեռքբերման վաղեմության իրավունքը և պարտավորեցվել Երևանի քաղաքապետարանին այն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու իրեն:

Հիմք ընդունելով ՀՀ վարչական դատարանի 2025 թվականի մայիսի 25-ի ՎԴ/7376/05/21 օրինական ուժի մեջ մտած վճիռը.

1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի փողոցի հ.103 շենքին՝ փողոցի կողմից անմիջապես հարող 151.20քմ մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Հունան Ռաֆիկի Հարությունյանի ձեռքբերման վաղեմության իրավունքը և այն ուղղակի վաճառքի միջոցով օտարել (վաճառել) Հունան Ռաֆիկի Հարությունյանին որոշման ընդունման պահին գործող տարածագնահատման 6-րդ գոտու շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, որը կազմում է 5 789 448 /հինգ միլիոն յոթ հարյուր ութսունինը հազար չորս հարյուր քառասունութ/ ՀՀ դրամ և փոխանցել Երևանի քաղաքապետարանի 900015211320 հաշվեհամարին (հողի օտարումից եկամուտներ):

2. Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

3. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ Երևան համայնքի անվամբ իրավունքի պետական

գրանցում կատարելու և Հունան Ռաֆիկի Հարությունյանի կողմից Երևանի քաղաքապետարան առուվաճառքի պայմանագիր կնքելու վերաբերյալ դիմումի ու հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի վճարումը հավաստող փաստաթղթեր ներկայացվելուց հետո՝ Երևանի քաղաքապետի անունից, կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4. Սահմանել, որ սույն որոշման ընդունման պահից հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը հողամասը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում չվճարվելու դեպքում՝ որոշման 1-ին կետը համարվում է ուժը կորցրած:

5. Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքը՝ պետական գրանցման կադաստրի կոմիտեում**:**

6.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

8.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ